ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«31» հոկտեմբերի 2019 թվականի N: 275 ք.Գյումրի

ՍԵԴԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Սեդա Համբարձումյանի 2019 թվականի հոկտեմբերի 29-ի դիմումը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 15 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սեդա Համբարձումյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից 14 աշխատանքային օր՝ 2019 թվականի նոյեմբերի 5-ից 22-ը ներառյալ:
2. Սեդա Համբարձումյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 15 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Ազնիվ Սերոբյանին:

Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է